ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին **03 հուլիսի 2025թ.**

ժամը 11:30-ին

2025թ հուլիսի 3-ին՝ ժամը 11:30-ին Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում կայացավ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 5 «Գարուն» և թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզների շենքերի քանդման և նոր շենքերի կառուցման վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Մ.Պողոսյան – Նիստի վարող, համայնքի ղեկավարի խորհրդական Մարիամ Պողոսյանը ներկայացրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը, սահմանված կարգի համաձայն, տեղադրված է եղել համայնքային կառավարման տեղեկատվական հարթակում, ինչպես նաև փակցված է եղել համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկի հայտարարությունների համար նախատեսված հատվածում: Մ.Պողոսյանը հավելեց, որ շահագրգիռ հանրությունը 2025 թվականի հուլիսի 1-ը ներառյալ հնարավորություն ուներ առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ հայտնելու թե՛ գրավոր /առձեռն/, թե՛ էլեկտրոնային տարբերակով, սակայն որևէ դիմում չի ստացվել:

Մ. Մկրտչյան – Համայնքի ղեկավարի տեղակալ Միեր Մկրտչյանը ներկայացրեց, որ համայնքի համար նախադպրոցական կրթության որակը հանդիսանում է առանցքային զարգացման ուղղություն: Երեխաների վաղ տարիքում ապահով, առողջ և կրթական միջավայրում գտնվելը հիմք է դնում նրանց հետագա ուսումնական հաջողությունների և սոցիալական ներառման համար: Ուստի համայնքը սուբվենցիոն ծրագրերի շրջանակում կարևորված է համարում գործող մանկապարտեզների հիմնանորոգումն ու պայմանների բարելավումը՝ նպատակ ունենալով ապահովել համընդհանուր հասանելիություն, մանկավարժական բարձր մակարդակ և հարմարավետ ենթակառուցվածք: «Սա դիտարկվում է որպես երկարաժամկետ ներդրում համայնքի մարդկային ներուժի զարգացման գործում: Հաշվի առնելով, որ մեր համայնքում ներկայումս բնակվում է Արցախից տեղահանված շուրջ 4000 քաղաքացի, և ներքին միգրացիայով պայմանավորված՝ տեղահանված ընտանիքների հոսքը համայնք շարունակում է

աճել, առաջնահերթ խնդիր է դառնում նախադպրոցական կրթական հաստատությունների ենթակառուցվածքների արդիականացումն ու հասանելիության ընդլայնումը: Մանկապարտեզների հիմնանորոգումը, վերակառուցումը և դրանց ամբողջ ներուժով գործունեության ապահովումը հրատապ անհրաժեշտություն է՝ նախ՝ երկար սպասման հերթերից խուսափելու, և ապա՝ համայնքում բնակվող բոլոր երեխաների կրթական իրավունքն լիարժեք իրացնելու նպատակով: Համայնքն այս գործընթացը դիտարկում է որպես սոցիալապես արդար, համաչափ զարգացման կարևոր միջոց՝ հատկապես պատերազմից տուժած և սոցիալապես խոցելի խմբերի ինտեգրման տեսանկյունից:»-նշեց Մ.Մկրտչյանը:

Հարց ու պատասխանի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Որոշում

Ամփոփելով հանրային քննարկումը՝ որոշվեց Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 5 «Գարուն» և թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզների շենքերի քանդման և նոր շենքերի կառուցման վերաբերյալ սուբվենիցայի ծրագրերը ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Զեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան Ա.Պետրոսյան

Քննարկման վարող և արձանագրող՝ Ս.Պողոսյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: